



Ինտերնետ և/կամ IPTV ծառայության մատուցման մասին

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ _____

ք. Երևան

« »

2021թ.

«Ինտերնետ Կոմունիկացիոն Ցանցեր» ՍՊԸ-ն, այսուհետ «Օպերատոր», ի դեմս Տնօրեն Արմեն Գալստյանի կողմից լիազորված _____ մի կողմից, և _____ այսուհետ՝ «Բաժանորդ» մյուս կողմից, երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկա

1.1 Օպերատորը GPON (Gigabit Passive Optical Network) ցանցի միջոցով մատուցում է Բաժանորդին՝

հանրային էլեկտրոնային հաղորդակցության Ինտերնետ ցանցի լայնաշերտ հասանելիության «Ինտերնետ» ծառայություն IPTV ծառայություններ

(նշել այն ծառայություն/ները, որից/որոնցից օգտվելու է Բաժանորդը)

Բաժանորդի բնակության վայրում _____ հասցեով (այսուհետ՝ տարածք), այսուհետ՝ Ծառայություն:

1.2 Սույն պայմանագրի շրջանակներում Բաժանորդի կողմից ընտրվել է Օպերատորի կողմից առաջարկվող ցանկից հետևյալ սակագնային փաթեթը՝ _____, որի արժեքը նշված է Բաժանորդի հետ կնքվող ծառայությունների մատուցման հայտում:

1.3. Ծառայության արագությունները գործում են բաշխման (SHARED) սկզբունքով:

1.4. IPTV ծառայությունների մասով Օպերատորը հանդես է գալիս Օպերատորի և «ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ-ի միջև _____ 2021թ-ին կնքված Գործակալության պայմանագրի հիման վրա:

IPTV ծառայությունների մատուցման մանրամասն տեղեկությունների համար Բաժանորդը կարող է անցնել _____ հղումով և ցանկացած բողոք և պահանջ ներկայացնել այդ ծառայությունները մատուցողին՝ «ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ-ին:

1.5. IPTV ծառայության պլիքները ցանկացած ժամանակ կարող են փոփոխվել «ԱՅԹԻՎԻ» ՍՊԸ-ի կողմից: /Սույն կետը գործում է Բաժանորդի կողմից IPTV ծառայություններից օգտվելու դեպքում

2. Պայմանագրի ժամկետը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է՝

12 (տասներկու) ամսով Real IP(500 ՀՀ դրամ) անորոշ ժամկետով

(նշել այն ժամկետը, որի ընթացքում Բաժանորդը օգտվելու է Ծառայությունից)

2.1.1 Տասներկու ամսով Օպերատորի ծառայությունից օգտվելու հայտ ներկայացնելու դեպքում բաժանորդին տրամադրվում է «Արտոնյալ» փաթեթի ծառայությունը:

Բաժանորդը պարտավորվում է ամսական վճարել Օպերատորի կողմից առաջարկվող «Արտոնյալ» փաթեթի ծառայության սակագնային փաթեթի վճարները տասներկու ամիս:

Բաժանորդն իրավունք ունի մեկ ամիս ժամկետով (հնարավորություն է ընձեռնվում երկու անգամով) կասեցնելու ծառայություններից օգտվելը՝ առանց վճարելու: Ծառայությունները վերականգնելուց հետո բաժանորդը շարունակում է կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները՝ մինչև վճարումների 12-րդ ամիսը լրանալը: Պայմանագիրը

շարունակելու դեպքում՝ երկրորդ և հաջորդ բոլոր տարիներին բաժանորդը կարող է իր կողմից ընտրած 2 ամիսներին կասեցնել ծառայություններից օգտվելը՝ ընդ որում, կասեցման նվազագույն ժամկետը մեկ ամիս է:

2.1.2 «Արտոնյալ» ժամկետի ավարտից հետո Պայմանագիրը համարվում է վերակնքված անորոշ ժամկետով և նույն պայմաններով:

2.1.3 Օպերատորի ծառայությունից անորոշ ժամկետով օգտվելու հայտ ներկայացնելու դեպքում Բաժանորդին տրամադրվում է «Անհատական» փաթեթի ծառայությունը:

Բաժանորդը պարտավորվում է վճարել Օպերատորի կողմից առաջարկվող «Անհատական» փաթեթի ծառայության սակագնային փաթեթի վճարները ամեն ամիս:

Բաժանորդին իրավունք ունի առաջին տարին մեկ ամսով (հնարավորություն է ընձեռնվում երկու անգամով) կասեցնելու ծառայությունից օգտվելը՝ առանց վճարելու:

13-րդ ամսից սկսած Բաժանորդը դառնում է ավտոմատ «Արտոնյալ» փաթեթի օգտատեր:

3. Բաժանորդի իրավունքներն ու պարտավորությունները

3.1. Բաժանորդն իրավունք ունի տեխնիկական հնարավորության սահմաններում ստանալ Ծառայությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալ առաջարկվող Ծառայությունների, կիրառվող սակագնային փաթեթների, մատուցված Ծառայությունների տեսակի, ծավալի, արժեքի, գանձված գումարների և Անձնական հաշվի ընթացիկ մնացորդի մասին,

3.2. Բաժանորդն իրավունք ունի Օպերատորի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխել իրեն մատուցվող Ծառայությունների ցանկը և սակագնային փաթեթները,

3.3. Բաժանորդն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Օպերատորի կողմից սահմանված կանոններով/օֆերտայով/ նախատեսված դեպքերում և տեխնիկական հնարավորության սահմաններում, ինչպես նաև իր ցանկությամբ հրաժարվել Օպերատորի կողմից ցանցի միջոցով տարածվող գովազդային և/կամ տեղեկատվական հաղորդագրությունների ստացման հնարավորությունից,

3.4. Բաժանորդը պարտավոր է վճարել մատուցված ծառայությունների դիմաց համաձայն գործող սակագների հաշվարկված գումարը, տվյալ ամսվա համար, մինչև ծառայության միացման օրվան հաջորդող ամսվա նույն օրը ներառյալ:

Բաժանորդը Պայմանագրի 1.2 կետով սահմանված սակագնային փաթեթի համար վճարումը կատարում է վճարային տերմինալներով՝ Սարքավորումների հանձնման-ընդունման ակտում նշված իր պայմանագրի համարի/ID միջոցով:

Բաժանորդին հնարավորություն է ընձեռնվում Ծառայության վճարման վերջին օրվա դրությամբ Ծառայության կասեցման դեպքում անցնել <https://lk.icn.am/captive/index.xhtml> հղումով և 1 օրով հետաձգել վճարումը, որի արդյունքում Ծառայությունը կգործի ևս 1 օր:

Օտարերկրյա քաղաքացիները Պայմանագրի կնքման պահին պարտավոր են վճարել 20.000 ՀՀ դրամ որպես դեպոզիտ, որը Պայմանագրի լուծման և Սարք/եր/ի հետ վերադարձման ժամանակ Օպերատորի նկատմամբ պարտավորություններ չունենալու դեպքում հետ է վերադարձվում:

3.5. Բոլոր դեպքերում Բաժանորդն իրավունք չունի Օպերատորից պահանջել վճարել իրեն պատճառված անուղղակի վնասները և իր բաց թողնված օգուտները:

3.6. Բաժանորդը պարտավոր է ապահովել տեղադրված Սարք/եր/ի նկատմամբ Օպերատորի մասնագետների հասանելիությունը /համագործակցությունը/, Սարք/եր/ի պահպանությունը:

4. Օպերատորի իրավունքներն ու պարտավորությունները

4.1. Օպերատորը պարտավոր է Բաժանորդի Ծառայությունն ակտիվացնել սույն պայմանագիրը կնքելու պահին՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները:

4.2. Օպերատորը պայմանագրի կնքման օրվանից 15 օրվա ընթացքում իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Ծառայության մատուցումը ընդհանրապես կամ Բաժանորդի կողմից ընտրված սակագնային տարբերակի պայմաններով տեխնիկապես հնարավոր չէ:

4.3. Օպերատորն իրավունք ունի սահմանել Պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ Բաժանորդի կողմից Պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման հայտով, Օպերատորի կայքում գործող Օֆերտայով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը չի կարող գերազանցել Բաժանորդի կողմից փաստացի վճարված միջին ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համապատասխան՝ համամասնորեն հաշվարկված գումարը:

5.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Օպերատորի ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ վնասի համար:

5.4. Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել իր բոլոր այն վնասները, որոնք Օպերատորը կրել է Բաժանորդի կողմից Օպերատորի կայքում գործող Օֆերտայի պայմանները խախտելու արդյունքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Ծառայություններից օգտվելու համար:

6. Ծառայությունների կասեցման և պայմանագրի լուծման կարգը

6.1 Պայմանագիրը Բաժանորդի նախաձեռնությամբ ցանկացած պահին լուծելու (3 /երեք/ օր առաջ գրավոր տեղեկացնելով Օպերատորին), ինչպես նաև Պայմանագրի պահանջները խախտելու հետևանքով Օպերատորի կողմից այն լուծելու դեպքերում Բաժանորդը պարտավոր է վճարել մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման օրը իրեն մատուցված Ծառայությունների համար, իսկ եթե Բաժանորդը դեռ 2.1.1 կետով սահմանված պայմանների օգտատեր է, նա նաև պարտավոր է վճարել հրաժարագին՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ դադարեցման օրվանից հաշված 15 (տասնհինգ) օրվա ընթացքում և երկու դեպքերում էլ այդ օրերի ընթացքում վերադարձնել Օպերատորի կողմից իրեն տրամադրված ի պահ բոլոր սարքավորումները: Սարքավորումները չվերադարձնելու դեպքում Բաժանորդը պարտավոր է վճարել մոդեմի, STB box-ի և հավելյալ TV ընդունիչ սարք/երի համար համաձայն սույն պայմանագրին կից կնքվող սարքավորումների հանձնման-ընդունման ակտում նշված արժեքները:

6.2 Սատուցված ծառայության դիմաց սույն պայմանագրի 3.4-րդ կետում սահմանված ժամկետներում Բաժանորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին մատուցվող ծառայությունները ժամանակավորապես կասեցվում են: Կասեցման ժամանակահատվածի համար ծառայությունների գումար չի հաշվարկվում:

6.3 Ծառայությունների ժամանակավոր կասեցման օրվանից երկու ամսվա ընթացքում Բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում Ծառայությունների մատուցումը դադարեցվում է, և պայմանագիրը լուծվում է Օպերատորի կողմից միակողմանիորեն՝ առանց ծանուցման, որի դեպքում հետ է վերադարձվում բոլոր սարքավորումները:

6.4 Բաժանորդի կողմից չվճարման պատճառով կասեցված ծառայությունը մինչև Օպերատորի նախաձեռնությամբ սույն պայմանագրի լուծումը Բաժանորդի կողմից վճարումները կատարելուց հետո վերականգնվում է առանց վճարի:

6.5 Բաժանորդի կողմից «Արտոնյալ» փաթեթում ներառված ծառայություններից որևէ մեկից հրաժարվելու դեպքում, մյուս ծառայության մատուցումը ևս դադարեցվում է, իսկ «Անհատական» փաթեթում ներառված ծառայություններից որևէ մեկից հրաժարվելու դեպքում՝ մյուս ծառայությունը կշարունակի գործել նոր պայմանագրով:

7. Սարք/եր/ի օգտագործման պայմանները

7.1. Այն դեպքում, երբ Ծառայությունների մատուցման նպատակով Սարք/եր/ը տրամադրվում է/են/ Բաժանորդին Օպերատորի կողմից, Սարք/եր/ի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Օպերատորին, իսկ Բաժանորդը ձեռք է բերում Սարք/եր/ի օգտագործման իրավունքը Պայմանագրի գործողության ընթացքում:

7.2. Տրամադրված Սարք/եր/ի վնասման դեպքում Բաժանորդը կրում է լիակատար նյութական պատասխանատվություն, սարքավորումների հանձնման-ընդունման ակտում նշված արժեքի չափով:

7.3. Սույն Պայմանագրի շրջանակներում Բաժանորդին օգտագործման իրավունքով փոխանցվել են մոդեմ, 1 □, 2 □, 3 □ հավելյալ TV սարք և STB Box IPTV ծառայությունների մատուցման նպատակով:

7.4. Բաժանորդն իրավունք չունի սարքավորումներն օտարել, տրամադրել վարձակալության/ենթավարձակալության, գրավ դնել կամ հանձնել այն անհատույց օգտագործման համար:

7.5. Բաժանորդը, սարք/եր/ի թերությունների և/կամ անսարքությունների հայտնաբերելու դեպքում, պարտավոր է դիմել Օպերատորին և հանձնման-ընդունման ակտով փոխանցել սարք/եր/ը վերջինիս: Այն դեպքում, երբ թերությունը առաջացել է ոչ Բաժանորդի մեղքով, Օպերատորն անհատույց վերացնում է սարք/երի թերությունները կամ փոխարինում դրանք այլ համապատասխան սարք/եր/ով: Այն դեպքում, երբ թերությունն առաջացել է Բաժանորդի մեղքով, Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել հատուցելու սարքերի թերությունները վերացնելու ծախսերը կամ պահանջել վնասների հատուցում, սարքավորումների հանձնման-ընդունման ակտում նշված արժեքի չափով:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.2. Պայմանագրում սահմանված ժամկետում և կարգով սարք/եր/ը չվերադարձնելու և/կամ դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի դիմել դատարան՝ սարք/եր/ը վերադարձնելու և/կամ ընդհանուր պարտքի գումարը բռնագանձելու պահանջով:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Բաժանորդային պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Օպերատորը կամ Բաժանորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Բաժանորդային պայմանագիրը կնքելուց հետո, և որը Օպերատորը կամ Բաժանորդը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Մասնավորապես՝ այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, սողանքը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, մայրուղային ենթակառուցվածքների խաթարումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված ակտը և այլն, որոնք անհնար են դարձնում Բաժանորդային պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Օպերատորը կամ Բաժանորդն իրավունք ունեն լուծել Բաժանորդային պայմանագիրը՝ այդ մասին նախապես 5 (հինգ) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

10. Տեղեկությունների գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

10.1. Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր միջոցները սույն Պայմանագրի շրջանակում Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակների, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

10.2. Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով Օպերատորի կողմից իր անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև դրանք և Պայմանագրի 10.1. կետում նշված տվյալները 3-րդ անձանց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու վերաբերյալ:

11. Եզրափակիչ դրույթներ

11.1. Պայմանագրի մատուցման պայմանները միակողմանիորեն կարող են փոփոխվել Օպերատորի նախաձեռնությամբ՝ 7 օր առաջ այդ մասին Բաժանորդին գրավոր ծանուցելու միջոցով:

11.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն Կողմերի կողմից ստորագրելու պահից:

11.3. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*Ստորագրելով սույն պայմանագիրը՝ հաստատում եմ, որ Պայմանագրում ներկայացված տեղեկությունները ճիշտ են, և սույնով հայտնում եմ, որ լիովին համաձայն եմ «Ինտերնետ Կոմունիկացիոն Ցանցեր» ՍՊԸ-ի կողմից վերջինիս պաշտոնական ինտերնետային վեբ կայքում (www.icn.am) Պայմանագրի կնքման դրությամբ հրապարակված էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին:

Օպերատոր (ներկայացուցիչ)
Անուն, Ազգանուն _____
Ստորագրություն _____

Բաժանորդ
Անուն, Ազգանուն _____
Ստորագրություն _____
Հեռ. ֆիքսված _____
Բջջային _____

«ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ
Գործ. հասցե, ք. Երևան, Մամիկոնյանց 48, 5-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 08418297
«Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335376000
Հեռ.՝ +374 12 979700
Էլ. փոստ՝ info@icn.am